

դի և անտեղի: Եւ երբ որ ծեծը այսպէս ընդարձակ գործող-  
րութիւն է ստացել, որքան հետաքրքրական բան է, որ նորա  
մեզ անկեղծութեամբ տեղեկացնեն, թէ ի՞նչ օգուտ և ար-  
դիւնք է ստացուում ծեծից:

Սակայն մեր ուսուցիչների ինքնամոլորութեան և անձնախա-  
բուութեան գլուխը հետեւեալն է: «Մեր մանկավարժները միշտ  
առաջարկում են ամենաթիթեւ պատիժներ. բայց թէ որքան է  
յաջողվում այդ ձևով կարգապահութիւնը մեր դպրոցներում  
այդ փոքրիկ գիտէ իւրատանիւր ուսուցիչ»: Փորձով խօսելը բաւա-  
կան զօրաւոր փաստաբանութիւն է, բայց ափսոս, որ ամենայն  
փորձ փորձ չէ: Մեր ուսուցիչներին փորձը այն միամիտ մար-  
դու փորձն է, որ դարձնութեան արուեստին անտեղեակ գոյ՛ւյ՛  
բոլոր մտերմերը կարգաւ փորձում է, և ոչ մէկով չի կարողա-  
նում տաքացած երկաթը ծեծել. նա մտերմերը մի առ մի շարժ-  
տում է բացականչելով. «այս չաքուչն էլ բանի պէտք չէ»:

(Շարահանկելի)

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ.

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ.

(Շարահանկելի)

Խ.

Սուրբ Խաչ վանքը և Էլեղեցին. Ձեռագիր ճապեան. Կենաց փայտի ճա-  
սանիք. Ժողովարարաւիւն յօգուտ էլեղեցոյ Կառուցման. Ելեղեցո-  
ցձո՞ճն. Վանիի վերադասուելէն և վանահայրերը. Տնտեսաւիւն. Ուխ-  
տագնացաւիւնը հին և նոր ճամառակ. Ուխտագնացները Սուրբ Խաչ  
վանքում. Նուէրներ. Խարաղանը Աստուծոյ պաճարում. Սուրբ Էջմի-  
ձնին հասանելի ճապար. Սարնու և ճոճի Կապալարասաները. Արժեաց  
Քիւր:

Ես արդէն կանգնած եմ Արգեաղու Սուրբ Խաչ վանքի տակ:  
Տեղը բոլորովին ամայի է և շուրջը քարակոյտներ երկար տա-  
րածութեամբ: Դէպի հարաւ 4—5 վերստ հեռաւորութեամբ

Մալիշկայ գիւղն է և Արփաչայը, իսկ դէպի հիւսիս—Արգեազ գիւղն է, ի հնումն Արկալան: Դեռ ևս 1857 թուին ներկայ վանքի տեղ կանգնած է եղել մի եկեղեցի, որից Արքեպիսկոպոս Ջալալեանի գիրքը պահպանել է մեզ համար միայն հետեւեալ տեղեկութիւնը: «Երևուածքն է միջակ՝ կառուցեալ ի կոփածոյ քարանց, որոյ երկայնութիւն վեշտասան քայլ և լայնութիւն չորեքտասան: Յաջմէ և յահեկէ սեղանւոյն գոն աւանդատունք » \*):

Այսպիսի հռչակաւոր ուխտատեղի և վերոյիշեալ հասարակ շինութեամբ՝ չէր կարող չգրաւել ազգեցիկ մարդկանց ուշագրութիւնը, վասնորոյ մտածեցին կանգնեցնել այդ տեղ ներկայ շինութիւնը, առանց աւանդելու պատմութեանը վերանորոգութեան առաջին միտքը յղացողի անունը:

Այժմեան եկեղեցին կառուցած է կապոյտ սրբատաշ քարից, որ բերուած է Մալիշկայ գիւղի մօտի քարահանքից: Քարը անպիտան կազմուածք ունի: Նա աւազախառն լինելով՝ շատ թոյլ է, հեշտ փշրվում է և շերտ շերտ պոկվում է անձրեւից, քամուց և այլ պատճառներից: Կարելի է ենթադրել, որ մի քանի տասնեակ տարիներից յետոյ եկեղեցու պատերը նշանաւոր կերպով բարակած կլինին: Այս իրողութիւնը մատնացոյց է անում ճարտարապետի և վերահսկողների անհոգութեան կամ անգիտութեան վերայ, քարեդէն նիւթի ընտրութեան գործում:

Եկեղեցին բարձր է և դմբեթայարկ, քսաներկու քայլ երկարութեամբ և տասնեօթը քայլ լայնութեամբ: Ունի երեք դուռն, հիւսիսային, արեւմտեան և հարուային: Կամարները կանգնած են չորր առանձնակի հաստ սիւների վերայ: Լուսամուտները մի մի հատ են իւրաքանչիւր կողմի պատում, այն ինչ գմբեթը բոլոր ի շուրջ զարդարուած է միաշար բազմաթիւ պատուհաններով: Եկեղեցու ներսը բոլորովին սպիտակ է և չէ ներկայացնում ոչ մի շքեղութիւն: Աւագ բեմը լայն է և աստիճանները երկու ծայրից են: Երկու խորաններից հարաւայինի մէջ գետեղուած է Կէնայ փայտի մատունը, որ ամենե-

(\*) Ջալալ. Ճանապ. հ. Բ. երես 192:

ւին չէ երևում, այլ նորա աեղ պատին կպած դրած է մի տափակ խաչ քար, իսկ սորա արևելեան ծայրում, պատի մէջ հագցրած է մի այլ անարձանագիր խաչքար:

Եկեղեցու տանիքը ծածկուած է աւազախառն կրամածով, ուստի անձրև գալուց երբեմնակի անցնում է առաստաղից: Այս պատճառով տանիքը սալաքարով ծածկելու համար՝ վանահայր Ստեփաննոս փարգապետը 1877 թուականին ինդրամատոյց է եղել Սրբազան Սինոդին, որպէս զի փիլիքնս բարեհաճեր թողնել վանահօր իրաւասութեան ներքոյ վանքի մի տարուայ էջմիածնապատկան եկամուտը: Հետևեալ տարու հոկտեմբերին (ՁԵ 2527) Սրբազան Սինոդը Նախիջևանի փոխանորդի ձեռքով հրաւիրել է փիրոյիշեալ վանահօր յաջորդ Յովհաննէս վարդապետ Ղալամեանցին յիշեալ նպատակի համար նոր ինորոյ ժողովարարութիւն անել Դարալագեաղի գիւղերում, իւրեան օգնական առնելով Փոք գիւղացի Սահակ Թարոյեանցին և Քարափլուի գիւղացի Գաբրիէլ ՁԵ . . . . բայց այս կարգադրութիւնը, որքան ինձ յայտնի է, մնաց առանց գործադրութեան:

Եկեղեցին չունի ոչ մի արձանագրութիւն, չունի նաև զանգուկատուն: Միակ զանգակը, որ նուիրել Քեշիշքեանդու Գրիգոր քահանան, կախուած է եկեղեցու արևմտեան դռան առաջ, արտաքուստ, մի Նախիջևանցի կնոջ գերեզմանի վերայ:

Եկեղեցու բազը փոքրամիտ է և քառակուսի, շրջապատուած քարեայ պարսպով. որի հարաւային մասը հնուց շինած է: Մուտքը երկու դարպասից է արևմտեան և հիւսիսային պարսպի մէջ: Հիւսիսային, արևմտեան և հարաւային պարսպապատին կից, ներքուստ, կառուցած են միաշար, միայրկի, քարաշէն, ցիառաղախ սենեակներ՝ թուով մինչև տասներկու հատ, դէպի բազը նայող լուսամուտներով, առանց ապակուկամ կոտորուած ապակիներով:

Սոցանից միայն երեք սենեակ նշանակուած են ամեհօրեայ ուխտաւորների ժամանակաւոր կեցութեան համար: Միւս սենեակների մէջ զետեղվում է միաբանութիւնը: Արևելեան պարսպին կից, ներքուստ, շինած է մի ընդարձակ գոմ: Հիւսի-

սային պարսպին կից, արտաքուստ, կանգնած են տասնևչորս հոտ միաշար, փոքրիկ, հասարակ, բերանը բաց խանութներ, որոնք վարձով տրվում են վաճառականներին ուխտի օրը:

Վանքի հարաւային պարսպապատից դուրս, քարակոյտների մէջ, ընկած է մի խաչքար, որի վերայ գրած է Աստուած ողորմի . . . . Ուսուլայ խաթունին, ամէն. թվին 259, (753): Իսկ հիւտիսային կողմում, Արգեազ գիւղը տանող ճանապարհի վերայ՝ ժայռ պատուանդանի ծայրում ցցուած է մի խաչքար, որ չունի ոչ արձանագրութիւն և ոչ թուական, Վանքը իւր շրջակայքում ունի բաւականաչափ վարելահող ոչ իբրև սեփականութիւն, այլ օգտուելու համար, ըստորում պատկանում է պետական գանձարանին և յատկացրած է Արգեազ գիւղի համայնքին:

Ես շատ անգամ այցելած եմ Սուրբ խաչ վանքին, բայց պէտք է խոստովանեմ, որ ոչ մի անգամ չեմ տեսած այն տեղ մաքրութիւն: Ուխտաւորների, նոյն իսկ վանքի ձիանքը և այլ անասունները կանգնում են բացօթեայ, եկեղեցու բազում: Պատերի տակ այս և այն տեղ երևում են թրիքի կոյտեր, որոնց աշխատում են ցրել ամեն կողմի վերայ ժրջան հաւերը: Սովորաբար մատաղը մորթվում է պարսպի ներսը, ուր թափվում է արիւն, ձգվում են ոսկերոտիք, փորոտիք և բնականապէս վանքապատկան շներին կռուացնում են իրար հետ: Ուխտաւորներին յատկացրած սենեակների մէջ յաճախակի կապում են ձի, եղ և այլն, որոնք ապականում են օդը: Մօտակայ գոմի բուրումը թափանցում է եկեղեցու ներսը նորա արևելեան լուսամուտով:

Եկեղեցու ներսը տիրում է ոչ պակաս անմաքրութիւն: Արևմտեան դռնից մտնելով այցելուն կոեսնէր ձախակողմեան յատակի վերայ թափուած մեծակոյտ ցորեան՝ քամած, կիսաքամ, դեռ ևս դարմանախառն: Փոքր ինչ այն կողմը—շարած տախտակներ: Սջ կողմում թափուած է կիր՝ պատերը նորոգելու համար: Եկեղեցու ներսը, պատուհանները և լուսամուտները սարսափելի փոշոտ: Զահերի վերայ կախուած են աղաւնու փետուրներ, չոր խոտի կտորներ և ձիու մազեր: Ինքն վե-

րայ ճաշոցի, մաշտոցի, ժամագրքի և միւս գրեանց շարքում բազմեցրած է վանահայր Ստեփաննոս վարդապետի վեղարը, մի երեւոյթ, որ տարաբաղդաբար իւրաքանչիւր այցելութեանս ժամանակ տեսած եմ:

Հիւսիսային խորանում ցրուած են պատկերներ և երկու երեք փութ բամբակ: Հարաւային խորանի մէջ, ուր ամփոփած է կենաց փայտի մասունքը, ցանուցիւր ընկած են Գարգած կանթեղի փշրանքներ, անպէտք շամլամներ, պատրոյիների մնացորդներ և այլն: Երևում է որ վանքի անմիջական ղեկավարը մնոս բարեաւ էր ասել գեղարուեստական ճաշակին, հոգատարութեան և մաքրասիրութեան:

Սուրբ խաչ վանքը կանգնած լինելով ամայի տեղ՝ զուրկ է ջրից, Նախկին ժամանակ ջուրը ստանում էին մէկ երկու վերստ հեռաւորութեամբ մի աղբիւրից, Արգեազ գիւղի հիւսիս-արեւելեան կողմում, որտեղից կաւէ խողովակներով երբեմն հոսելիս է եղել մինչի վանքի մօտը: Ժամանակի ընթացքում խողովակները խանգարուել են և ջուրը հետեւաբար՝ անհետացել է: Սակայն իմ ժամանակ ներկայ վանահայրը աշխատում էր նորից բերել յիշեալ ջուրը իւր հին ճանապարհով մինչև վանքի հիւսիսային դարբասը:

Վանքը հին յիշատակներից զուրկ է, բայց պէտք է յիշել, որ եկեղեցու թանձր փոշու տակ ընկած կայ մի ձեռագիր աւետարան, 370 տարեկան հասակից վեր. որին Վան քաղաքի սահմանում, 10 լաթ գաւառում, ոմն տանուատէր Յակոբշէն ընծայել է Մատնեվանք կոչուած սուրբ Աստուածածին եկեղեցուն: Թէև նորա յիշատակարանի հեղինակը կտակել է անել պահպանել այս աւետարանը Մատնեվանքի մէջ, բայց նա այժմ յայտնի չէ ի՞նչ ճանապարհով եկել է Դարալագեագի Սուրբ խաչ վանքը: Աւետարանը ունի տասնևվեց թերթ ձեռագրաշարձ գոյնգոյն պատկերներ, որոնք ներկայացնում են Քրիստոսի մարգեղութիւնը, ծնունդը, չարչարանքը և այլն: Սկզբում և վերջում ունի երկերկու մագաղաթեայ թերթեր՝ աւետարանից մի քանի տուն արտագրած երկաթագիր տաւերով:

Երկար յիշատակարանի վերջին կցած է սեւ զի ես սա ընծայ

և նուէր և անջինջ յիշատակ յաթոռն մայրաքաղաքին՝ Խլաթա ի սուրբ ուխտն Մատնեվանք կոչեցեալ՝ ի գուռն մօրն լուսոյ սուրբ Աստուածածնին ի վայելումն քաջ գիտապետին տէր Վարդան եպիսկոպոսին և համանուն և միակրաւն եղբարցն իւրոց, զոր և Տէր Աստուած ժառանգել տացէ նոցա զսուրբ աւետարանս խաղաղական կենօք յերկարաձիգ ժամանակս ի յիշատակութիւն Յակոբշին և իւրոցն յամենին՝ պապերուն և հաւերուն: Եւ զի մի ոք հեռացուցէ զսա ի գրանէ սուրբ Աստուածածնին ոչ յիւրոցն և ոչ յաւտարաց: Այլ և ինամողն և լաւ պահողն աւրհնի յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա, ամէն. ի Թվին հայոց ԶԾԶ (956—1507):

Սուրբ խաչ վանքին նուիրած է Դարալագեազի Փոռ գիւղացի Սարգիս տէր Պօղոսեանցի կողմից մի արծաթապատ փաքրագիր աւետարան այս արձանագրութեամբ « յիշատակ է սուրբ խաչս իւր կողմի արծաթով. նազուխան ընծայեց իւր եղբայր աէր Պօղոս Հախվերդիբէգեանին. 1867: »

Արդեօք սրտեղից է ծագել իմ նկարագրելի վանքի այժմեան Սուրբ Խաչ անունը, որի մասին ես չունիմ ոչ պատմական և ոչ արձանագրական տեղեկութիւններ: Վերը յիշեցի, որ վանքի հարաւային խորանում, խաչքարի տակ, պահուած է, ասում են, կենաց փայտի մասնիկը. Թէ ի՞նչ իրողութեան և փաստերի վերայ է հիմնուած այդ աւանդութիւնը, այդ ես չգիտեմ: Սակայն Արքեպիսկոպոս Զալալեանը՝ այս աւանդութեան հաստատութեան համար յառաջ է բերում իւր գրքի մէջ Հացունեաց խաչի պատմութիւնից մի կտոր\*): Այժմ մտնելով պատմութեանց մէջ տեսնենք որքան հիմնաւոր է Սրբազանի կարծիքը: Յայտնի է որ 614 թուականին պարսից Խոսրով թագաւորի Խոռեմ զօրավարը, պատերազմ մղելով Յունաց կայսերութեան՝ Հերակլէսի օրով, յաղթեց նորան, մտաւ Պալեստին, նուաճեց Երուսաղէմը և գերեց կենաց փայտը—Քրիստոսի խաչը:

Քրիստոնեայ աշխարհի համար այս մեծ նախատինք և վիրա-

(\*) Զալալ. ճանապ. հ. Բ. եր. 132—133.

ւորանք էր, ուստի Հերակլ կոյսորը ամեն կերպ աշխատում էր վերադարձնել սուրբ խաչը պարսկաստանից Երուսաղէմ՝ Երբ պարսից գահը բարձրացաւ մանուկ Արտաշէրը, Հերակլէսը առանձին պատգամաւորի ձեռքով խոստացաւ Խոռեմին՝ նպաստել նորա բարձրանալուն թագաւորական գահը, միայն թէ նա համաձայնէր վերադարձնել կենաց փայտը: Արգարե Խոռեմը յանձն առաւ, գնալով Տիւրոն՝ սպանեց փոքրիկ Արտաշէրին՝ ինքը նորա տեղ թագաւորեց և կենաց փայտը վերադարձրեց Հերակլէս կայսեր, որ տարաւ և դրեց Երուսաղէմ իւր տեղում: Իրողութիւնը այսպէս են աւանդում մեզ Յովհաննէս կաթողիկոսը, Ասողիկը և հայր Չամչեանը\*):

Սակայն սորա մասին աւանդումէ և այլ պատմութիւն ճառընտրի մէջ: Իբրև թէ կենաց փայտը Խոռեմի կամ Խոռեանի ձեռքով գերելուց յետոյ՝ Հերակլ կայսրը Գաւրիժու մօտ յաղթեց Խոսրով թագաւորին, ազատեց գերեալ սուրբ խաչը, անցաւ հայոց աշխարհը, բանակ դրեց. Գերատեսպ դաշտում՝ Շաւարշայ Սանատրուկ քաղաքի մօտ, ուր երկրորդ անգամ ներկայացաւ նորան Սիւնեաց Բիւրեղ (Ջալալեանի գրքի մէջ Մառի) տիկինը: Առաջին անգամ տիկինը ներկայացել էր Հերակլին Վասպուրական աշխարհում՝ երբ կայսրը արշաւում էր պարսկաստանի վերայ: Որովհետև տիկին Բիւրեղը առաջին անգամ ընծայ էր բերել կայսեր հազար սպաւարտ, ոսկեկուռ զէն և հազար զրահ և երեք հազար մարդից մի գունդ՝ վասնորոյ նորա երկրորդ գալստեան միջոցին Հերակլը առաջարկեց նորան կամ գանձ կամ՝ աշխարհ, իսկ տիկինը դորանց փոխարէն խնդրեց կենաց փայտի մի մասը: Երբ զանազան հանգամանքներէց յետոյ վերջապէս տիկինը ոտացաւ կենաց փայտի մասնիկը և սորան ջորու վերայ բարձած՝ հասաւ մինչև Հացունեաց դաշտը, այդ տեղ ջորին նստեց և անկարելի եղաւ նորան շարժել: Այդ տեսնելով տիկինը հարկադրուեցաւ, մի ճգնաւորի խորհրդով, կառուցանել այդ տեղում եկեղեցի և

(\*) Յոհ. կաթ. երես 44. Ասողիկ. գլ. Գ. երես 117. Չամչ. պատմ. հ. Բ. գլ. ԾԱ. երես 324—327.

սուրբ Նշանի վանք, որ կոչուեց Հացուհեաց \*):

Հայր Աւոնդ Ալիշանեանի աշխարհագրութիւնը Հացուհեաց դաշտը գետեղումէ Զ\*\*» անուանով գաւառում՝ Արմի ծովի մօտ \*\*): Իսկ վարդանի աշխարհագրութեան հաստատութեամբ՝ Հացուհեաց դաշտը պէտք է լինի Արտազ և Նախիջևան գաւառների մէջ, Արաքսի աջ ափից դէպի արեւմուտ: «Քանզի գնայր նա ի դաշտէն Գերատայ որ առ Սանատրուկ քաղաքաւ Արտազ գաւառի, անցանել ընդ գաւառն Նախիճուան ի Սիւնիս \*\*\*):

Այս աւանդութիւնից երևումէ, որ Բիւրեղ տիկնոջ ձեռք բերած կենաց փայտի մասնիկը մնալով Հացուհեաց դաշտում, չէ հասել Սիւնիեաց գաւառը: Եւ եթէ սորոն հակառակ, յիշեալ մասնիկը մի այլ կերպով է հասել Սիւնիք և ամփոփուել է Դարալագեազի սուրբ խաչ վանքում, դորա հաստատութեան համար ես շունիմ ոչ մի աւանդական տեղեկութիւն: Բացի Հացուհեաց խաչի պատմութիւնը՝ կան Միծառնէոյ խաչի և այլ խաչերի պատմութիւններ հին ժամանակներում, որոնցից եզրակացնել կարելի է որ աւանդաբար տարածուած էին Հայաստանում կենաց փայտի մասնիկները:

Նոյն աւանդութիւնները պահպանուել են և այժմեան հայերի մէջ: Զորորինակ Շորէկէր, որ Տաճկաց զինուորական ծառայութեան գնդապետ էր ու ճանապարհորդել է Եփրատի ակունքներում, իւր «Բարձր Հայքի նկարագրութիւն» անուանով աշխատութեան մէջ ասում է, որ Եփրատին սահմանակից հայերը ընդունում են թէ Յուսաց Հերակլ կայսրը պարսկաստանից դարձնելով գերեալ խաչը, թաղեց նորան առժամանակ Դոճի դաղ լեռան վերայ և ապա հանեց այստեղից և տաբաւ Բիւզանդիան, Հերակլը հիւրասիրուելով Երզրումում հայոց մի տիկնոջ մօտ, տուեց նորան կենաց փայտի մասը և տիկինը շինեց Եփրատի ակունքում խաչավանքը, ուր և ամփոփեց սուրբ մասնիկը:

(\*) Զառ. պատմ. Հայոց հ. Բ. երես 532—533:

(\*\*) Ալիշան. Տեղեկագիր Հայոց Մեծաց, երես 57. պրակ 103:

(\*\*\*) Ինճիճեան. Ատորագր. Տնոյն Հայաստ կր. 222:

Երբ շերակ կայսրը հանում էր Դուսմի գաղ լերան վերայ թաղած խաչափայտը, նորն տեղը իսկոյն բղխում է աղբիւր— Եփրատի մի վտակը— որ այժմ ևս, Շորէկկէրի ասութեամբ, մեծ յարգանք ունի հայերի և տաճիկների աչքումը: Սոքա իւրաքանչիւր տարի՝ օգոստոս ամսում՝ ուխտ են գալի Խաչափայտքը և ապա լողանում են Եփրատի սուրբ աղբիւրում, որ կոչվում է Խաչափայտ \* ):

Դեռ ևս 184 հայկ. կամ 735 Փրկչ. թուականին, Ս. Օրբելեանի ասելով, Արկազն գիւղում— այժմեան Արգեաղը— կար սեռեակի, որ յանուն սրբոյն Քրիստափորի անյայթ զօրավարին շինեալ էր, \*\*), ուր և առժամանակ հանգստացրին Մօզ աւանում սպանուած Ստեփաննոս եպիսկոպոսի մարմինը: Թէև այժմ հաստատապէս ոչ ոք, բացի Ջալալեանի գիւղը, չէ կարող հաստատել որ սուրբ Քրիստափորի սեռեակն այժմեան սուրբ խաչ վանքի տեղն էր, բայց և այնպէս հաւատի է, որ մինչև 1303 թուականը ապրող և Սիւնեաց պատմութիւնը գրող Օրբելեանը կենաց փայտի այգտեղ լինելու համար ոչինչ չէ խօսում:

Մի կողմ թողնելով այս պատմական և աւանդական տեղեկութիւնները, խօսեմ այժմ թէ երբ, ի՞նչ կերպով և ո՞ւմ ձեռքով կառուցուեց Սուրբ խաչ վանքի ներկայ եկեղեցին: Երբ վերջինը դեռ ևս չկար, երբ դեռ կանգնած էր Ջալալեանի նկարած հին շինութիւնը, վանքը չունէր մշտական վանահայր թէև նա համարվում էր հռչակաւոր ուխտատեղի և Էջմիածինը ևս սովորաբար ստանում էր ուխտի օրի արդիւնքը: Նորան կառավարում էին Մալիշկայ գիւղի քահանաներից մինը— Առաքել քահանայ տէր Աստուածատրեանց, երբէմն էլ այլ աշխարհականներ, ինչպէս կտեսնենք յետոյ:

Սայն այս քահանան դեռ 1860—1864 թուերում ինքնազուխժողովարարութիւն էր սկսել Դարալագեազի գիւղերում յօգուտ կառուցանելի վանքի: Մինչև անգամ եկեղեցու շինու-

(\*) Штрөкверъ, Очерки Верхной Арменіи երես 20.

(\*\*) Օրբելեան պատմ. գլ. ԼԱ.

Թիւնը յանձնել էր յոյն Դամեան անուանով որմնադրին: Բայց էջմիածնի վարչութիւնը ապօրինի համարելով քահանայի ինքնազուլի վարմունքը՝ հեռացրել է նորան իւր ընտրած պաշտօնից, հաշիւ և համար պահանջելով նորանից—և մինչև 300 ռուբլի վատնած գումար բարդելով վրան: Դատապարտուած քահանան թէև շարունակուով էր իւր ժողովարութիւնը, բայց այս անգամ արդէն իւր օգտին, պարտքից դուրս գալու համար . . . :

Եկեղեցու շինութեան հորցը արդէն ծագել էր և մի քանի քայլ յառաջ գնացել, այլ ևս չէր կարելի կէս ճանապարհում կանգնել: Գործին կանոնաւոր ընթացք տալու համար կազմուեցաւ ժողովարար հոգաբարձութիւն. շինութիւնը Կառնէ-Կաղար ռուբլի վարձու կապալով տրվեցաւ Ալէքսանդրուպօլցի Մելքոն Դաւթեան որմնադրին: Բայց եղել է արդեօք նախագիծ շինութեան և ծախուց. ո՞վ է վերահաստատել քարի և այլ նիւթեղինաց պիտանութիւնը. ո՞վ է վերաստուգել շինութեան կանոնաւորութիւնը, ո՞վ է ստացել նորան կապալառուից և յանձնել վարչութեանը, այդպիսի տեղեկութիւններ ես չունիմ:

Վեհափառ Գէորգ Դ. ը 1868 թուի նոյեմբերի մէկից, համար 476 կոնդակով, յանձնել է Մալիշկայու տէր աւագ Աբրահամեանցին նոր ի նորոյ ժողովարարութիւն անել Սուրբ Խաչի թերի շինութեան համար: Նոյն թուականին հաստատուել են վերատեսուչք վանքի՝ Աղաւնաձորի—Մելիք Մատթէոս Եղեայեանցը. Մալիշկեցի—Մելիք Շահբազ Խոնոյեանցը և Յարութիւն Արախանեանց և Մարտիրոս գիւղացի—մելիք Ներսէս Մսերառետեցի, որոնց թուին աւելանում է: 1870 թուի մայիսի 28 ից, Քեշիշքեանդցի Բէգլար Աղախանեանց: Վերատեսչաց վերայ՝ իբրև ներկայացուցիչ ծայրագոյն հոգևոր վարչութեան նշանակուեց Գրիգոր վարդապետ Տէր Գրիգորեանց աբգալ Դաւիթ մականունով, Աստուծո Պօղոս քլիսայ գիւղից: Այս վարդապետը վերջին տարիներում կարգուեց վանահայր Աստուծո Մակարայ վանքում, ուր և սպանուեց անողորմաբար անյայտ չարագործներէց:

Ժողովարար վերատեսուչները շարունակել են իւրեանց գործունէութիւնը ամբողջ ութ տարի, Երեւանի, Նախիջևանի, Նոր Բայազէտի, Դարալագեհազի, Սուրմալուի, Տաթևու, Մեղրիի, Ալէքսանդրապօլու և այլ գաւառների սահմաններում: Երեւանի թեմակալի փոխանորդ Մեսրոպ վարդապետ—այժմ եպիսկոպոս—Սմբատեանց, նոյն 1868 թուի նոյեմբերի վերջում, առաջագրութիւններ է ուղարկել Սարգարապատու բարեկարգին, Ալէքսանդրապօլու հոգևոր կառավարութեան (№ 64 և 68) երևի և այլոց, որ յիշեալ տէր Աւագ Աբրահամեանցին նպաստեն ժողովարարութեան ժամանակ:

Նուիրատուութեան գործի յաջողութիւնը հասկանալու համար ես կարող եմ մատնացոյց լինել մի մատենի վերայ, որ Երեւանի թեմակալի փոխանորդը, Սրբազան Սինոդի հրամանին համաձայն, տուել է ժողովարարներին նուէրները գրելու՝ սկսած 1869 թուի մարտի 21ից: Յիշեալ մատենից երևում է, որ 1869 և 1870 թուականների ընթացքում՝ ժողովուրդը է 4070 ուսուցիչ 3 կուպէկ:

Ժողովարար վերատեսուչները և հոգաբարձուները ըստ երեւոյթին աղափօքէն էին վարվում ժողոված գումարի հետ: Նորանից մնացած և իմ ձեռքս հասած մի քանի թղթերից երևում է որ Մելիք Մատթէոս Եղիայեանը, Մելիք Ներսէս Սուրատեանը և Մելիք Նահապետ Խանոյեանը, 1869 թուի մարտի 19ին, տուել են իւրեանց ընկերակից Յարութիւն Ղարախանեանցին հետեւեալ պայմանագիրը. «ի վերատեսչացս Սրբոյ խաչին Արգեհազու, Մալիշկեցի Յարութիւն Ղարախանովիդ. սոյն գրութեամբ և ստորագրութեամբ մերով պայման լիցի ի մէջ առ քեզ, որքան ձեր ծառայութեամբն ժողովարարութեան գրամոց թիւն երբ հասանէ ի հազար մանէթ, հարիւրն քեզ պարտ եմք հասուցանել, ուստի ստորագրելովք և մնամք հաստատուն պայմանիս մերոյ»:

Եթէ պատուելի վերատեսուչները իւրեանց մի ընկերի հետ կարող էին այսպէս պայմանաւորուել, սպա ով նորանց կարգելէր իւրեանց սեփական շահերը աչքի առաջ ունենալու: Կործումեմ որ այդպէս կանէին՝ միայն մի որ և է ճարտիկութիւն

գործ դնելով: Ժողովարար այժմ հանգուցեալ, տէր Աւագ Աբրահամեանը ըստ երևոյթին այնքան ճարտիկներից չէ եղել, որ չէ կարողացել ծայրը ծայրին հասցնել և թոյլ է տուել իւրեան կատարել մի անկարգութիւն: Այդ առիթով Մինօգի անդամ Մ. Ե. Ս. 1872 թուականի յունիսի 21 գրութեամբ յիշեցնումէ նորան պատասխանատուութեան մասին, բայց արդէն ուշ էր, որդէն բանը բանից անցել էր: Նախազգացումը նպատակին չհասաւ:

Տէր Աւագը տուգանքի է ենթարկուել և Նախիջևանի թեմի փոխանորդ Թադէոս վարդապետ տէր Դանիէլեանցը, նորան նեղ դրութիւնից հանելու մտքով, ապիս է նորա ձեռքը մի կտոր թուղթ 1873 թուականի հոկտեմբերի 8ին, որպէս զի նա, տէր Աւագը, «անկեալ ի ներքոյ նեղութեանց և պարտուց» կարողանայ իւր համար նպաստ ժողովել Շարուբայ և Դարալագեանազի աստուածասէր ժողովրդոց և հոգևորականաց» մէջ: Մալիշկեցի տէր Աւաքելից յետոյ տէր Աւագը երկրորդ օրինակն է որ Սուրբ խաչ վանքի պատճառով ենթարկուում է պատժի հոգևոր իշխանութեան կողմից: Դորա հակառակ, նոյն ասպարիզում գործող աշխարհական անձինք մաքուր են դուրս գալի՝ այսինքն աննշմարելի են մնում . . . :

Այնքան աղմուկներից, չարչարանքից, ժողովարարութիւնից, պատիժներից, ճարտիկութիւններից և գրի չանցնելու շատ գործողութիւններից յետոյ, վերջապէս վանքի շինութիւնը աւարտուումէ 1871 թուին և հետեւեալ 1872 թուականի աշնանը, Սուրբ խաչի տօնի օրը հոկտեմբերի 10ին, խուռն բաղմութեան ներկայութեամբ օծումէ նորան Գրիգոր եպիսկոպոս Սուղեղեանցը: Երկաթէ խաչը այդ օրը գմբեթի գլխին դնելու կնքաւորութեան համար լինումէ հրապարակական աճրդախօսութիւն և վիճակը հաբլ-ը ռուբլի նուէրով ընկնումէ Դարալագեանի Փաշալու գիւղացի մահտեսի Մարտիրոսին (Մարտո):

Մի քանի տասնեակ տարիներ առաջ, այն է յիսնական թուականներում: Սուրբ խաչ վանքը չունէր կուսակրօն վանահայրեր, այլ նորա ներքին կառավարութիւնը և եկամուտը, բայց տօնի օրը, յանձնվում էին իւրաքանչիւր տարի մի կապալա-

ուռի, որ կոչվում էր Լեյպտեռնալ: Պաշտօնագէտ յայտնի է, որ 1856 թուին Սուրբ Խաչի վերատեսուչն էր Մալիշկեցի մելիք Շահբազ Խանոյեանը, իսկ 1862 թուին՝ նոյն գիւղի ծխատէր Աւաքել քահանայ տէր Աստուածատրեանը: Այդ միջոցումը և 1862 թուից յետոյ մինչև 1871 թուականը վանքը փոփոխակի անցել է նոյն և կամ ուրիշ կապալառուների ձեռքը: Այդպիսիները եղել են Մալիշկեցի Յարութիւն Ղարախանեանց, Յովասափ Օջախեանց, Ռինգ գիւղացի Սարգիս Տէր Պետրոսեանց, նոյն գիւղի ծխատէր Գրիգոր քահանայ և Քեշիշքեանդցի Բէգլար Աղախանեանցը: Կապալառութեան գինը տարեկան լինում էր 120—150 ուռիի և կարգադրում էր Նախիջևանի հոգևոր Կառավարութիւնը:

Նկեղեցու կառուցման շրջանում վանքի վանահայր նշանակուած էր վերոյիշեալ Գրիգոր վարդապետ Տէր Գրիգորեան, որի գործունէութիւնը առաւել վայել է ժողովարարութեան ասպարիզում: Նա առաջին կուսակիցի վանահայրն էր Սուրբ Խաչ վանքում: Նորան յաջորդեց 1871 թուականին Էջմիածնի պլանի վերակացու, երբեմն այրի քահանայ Երնջակ գաւառի նորաշէն գիւղացի՝ Ստեփաննոս վարդապետ մելիք Դաւթեան, որ իւր պաշտօնում մնաց մինչև 1878 թուականը: Սորա ժամանակ Սուրբ Խաչ վանքի բնակիչներն էին մի կամ երկու պատահական տիրացու՝ երկու ծառայ, երկու հովիւ և տնտես կանայք:

Մի նշանաւոր վանք որ իւր հռչակը վաղուց տարածել է է Երեւանի և Ելիսաբետպօլի նահանգների շատ տեղերի հայ ժողովուրդի մէջ, որ ունի համարեա իւրաքանչիւր օր բազմաթիւ ուխտաւորներ, որ ունի նշանաւոր նիւթական եկամուտ այցելուներից ոչ միայն ուխտի, այլ և ամենայն միւս օրերը որ ունի մշտական միարանութիւն թէև սակաւաթիւ, ոչ ապաքէն պէտք է պայծառ լինի իւր հոգևոր կարգ ու կանոններով, ամենօրեայ ժամասացութեամբ և այլ բարեկարգութեամբ: Սակայն երեք չորս տարիների ընթացքում իմ յաճախակի այցելութեամբս, տարաբաղդաբար լիովին հաւաստեցած եմ որ այդ հռչակաւոր վանքում, Ստեփաննոս վար-

գապետի առաջնորդութեան օրով, մշտական ուխտաւորների առաջ ոչ միայն լուր օրերը, այլ և կիրակի և տօն օրերը հազիւ կատարւում էր ժամասացութիւն:

Այս տեսնելով ես մտածում էի թէ ինչի՞ համար է հապա միաբանութիւնը վանքի մէջ, ուր ուր ուխտաւորը չպէտք է տեսնէ պատարագ, չպէտք է լսէ մաղթանք, սովորական ժամերգութիւն, չպէտք է ստանայ հոգեկան մխիթարութիւն. այլ լռիկ մնջիկ պէտք է մտնէ եկեղեցին, լռիկ մնջիկ իւր համար ծնկաչօք աղօթէ, դրամական նուէր ձգէ ուր հարկն է, մատաղը մորթէ, ուտեցնէ և ուտէ, էրին և մորթը տայ վանահօրը և ապա լռիկ մնջիկ վերադառնայ իւր տուն . . . : Ուխտաւորը չէ՞ որ սոյն ձևով կարող է կատարել իւր այցելութիւնները և այնպիսի վանքերին, որոնք հարիւրաւոր տարիներ աւերակ են . . . . ուր վանահայրերի փոխարէն բնակւում են բուեր . . . . : Ուրեմն տարբերութիւն չպէտք է լինի աւերակ և շէն վանքերի մէջ . . . . :

Ես դիտմամբ շեշտում եմ սոյնպիսի հանգամանքների վերայ և շատ բան կարող էի արձանագցնել այստեղ սոյն վանքի ներքին կառավարութեան մասին, ըստորում Սուրբ խաչը ամբողջ Դարալագեաղում միակ շէն վանքը լինելով առիթ է տուել ինձ ի մօտոյ ծանօթանալ նորա ներքին կեանքի պայմաններին: Իմ կարծիքով արժան է ուսումնասիրել մեր շէն վանքերի ներքին կառավարութիւնը, կազմակերպութիւնը, անտեսութիւնը, եկեղեցական պաշտօնավարութիւնը, ուխտագնացութիւնը, ուխտաւորների և միաբանութեան փոխադարձ յարաբերութիւնը, ուխտաւորների կեցութիւնը և այլն և այլն:

Սրբազան Սինօզի կարգադրութեամբ, 1878 թուականի կիտում Ստեփաննոս վարդապետին յաջորդեց իբրև վանահայր Յովհաննէս վարդապետ Ղալամբանց (այժմ հանգուցեալ): Սորա վանահայրութիւնը երկարատև չեղաւ: Հետևեալ 1879 թուականին նա նշանակուելով Տաթևու վանահայր, իւր պաշտօնը Սուրբ խաչում յանձնեց Ալէքսանդրապօլցի Յովհաննէս վարդապետ Փեշտամալջեանին: Սորա գործունէութեան մասին ոչինչ ասել չեմ կարող, ըստորում թուականի վերջումը ես

ընդ միշտ բացակայել եմ Դարալագեազից: Սորա վանահայրութիւնը Սուրբ խաչ վանքում շարունակուեց մինչև 1886 թուականը, երբ նորա տեղ վերստին նշանակուեց մեզ արդէն ծանօթ Ստեփաննոս վարդապետ Մելիք Գաւթեանց, որ և կայ այժմ իւր բոլոր յաջողութեամբ. . . . Այս է ահա Սուրբ խաչ վանքի վանահայրերի շուրջը մինչև մեր օրերը:

Վանքի տնտեսական հարստութեան մասին տեղեկութիւն ունենալու համար աւելացնում եմ այս տեղ, որ 1877/8 թուականներում, Ստեփաննոս վարդապետի օրով վանքը ունէր բաւականին թուով անասուն, որոնց մի մասը ցրուած էր Դարալագեազի գիւղերում և որոնց տեղը յայտնի էր միւսնոյն վանահօրը: Իսկ այն մասը որ մնում էր վանքում, յաճախակի ենթարկւում էր փոփոխութեան, այսինքն երբէմն աւելանում էին նորանոր նուէրներով և կամ յաճախակի ծախւում էին ոչխարներ և գառներ ուխտաւորների վերայ նոյն վանքում մատաղ անելու համար: Բայց այնուամենայնիւ յիշեալ թուերում վանքը ունէր 200ից աւելի ոչխար, 30 հատ խոշոր ապրանք, երկու ձի, 20 հատ սագ, 10 հնդկահաւ և բազմաթիւ հաւ:

Երբ 1878 թուականի կիսում Ստեփաննոս վարդապետը իւր պաշտօնի հետ յանձնում էր իւր յաջորդ Յովհաննէս վարդապետ Ղալամբանցին և վանքապատկան անասունները, վերոյիշեալ թուից մնացել էին միայն 14 գլուխ խոշոր ապրանք, 27 այծ, 111 ոչխար և երկու աւանակ: Իզուր դուք կորոնէք կայից ընդհանուր ցուցակ. իսկ ելից և մտից մատեանով հազիւ թէ կարողանաք մի բան վերաստուգել: Ինչ և իցէ, թողնենք այս դժուարին գործը և դիմենք ուխտազնացութեան Սուրբ խաչ վանքում:

Արարատեան գաւառի հանրահռչակ, նշանաւոր և ուխտազնացութեամբ հարուստ վանքերից մինն է Դարալագեազի այս վանքը, որ կոչւո՞ւմ է և Արգէապա սուրբ Խաչ, Արգեսզ գիւղի մօտ լինելով: Երեւանի ո՞ր անկիւնում արդեօք յայտնի չէ հայ ժողովրդի մէջ այդ վանքի անունը: Քանիցս անգամ իմ ականջովս լսած եմ Դարալագեազու հայ ժողովրդի երգուիլը Ար-

գետազի սուրբ խաչով: Շատերը մինչև անգամ կրճատ յիշում են երգման մէջ միայն Արգեազի անունը և են Արգեազը գիտենայ, Արգեազը խոսով կենայ, Արգեազը օգնութիւն հասնի, և այլն:

Սոյն այս անսահման հաւատն և յարգանքն է գէպի Սուրբ խաչ վանքն, որ ժողովրդի անպաճոյճ բանաստեղծական ոգին զարթեցրել է հետևեալ կերպով գովաբանելու իւր սուրբ խաչը:

« Քրիստոնեայք, եկէք անկաճ արեցէք,

Գովասանքը կտամ Պարօն Սուրբ Խաչին.

Ով որ ուխտ ունի՝ կառնի մուրադը,

Կտան ողորմութիւն սէրը Սուրբ խաչին:

Սարերը ընկելայ մէկմէկու ղօշայ,

Ուխտաւորը կգայ թագաւոր փաշայ,

Զորս կողմիցն մատաղ կգայ համէշայ.

Կզոհեն մատաղը սէրը սուրբ խաչին:

Ուխտաւորը կգայ ոսկէ ռախտով,

Մէջքերնին կապած է թիրմայի շալով,

Զորս կողմից՝ կաղաչեն ողբալով՝ լալով,

Արտասունք կթափեն սէրը Սուրբ խաչին:

Մեղաւորնին իրանց մեղքը ասել ա՛,

Ձէնը գնաց Դաղստանը՝ հասել ա՛,

Նուատտ Ստեփանը զօրութիւնը տեսել ա՛,

Ել չի մոռանալ սէրը Սուրբ խաչին: »

Հեղինակ Ստեփանը մի անյայտ անձնագորութիւն է և ըստ աւանդութեան՝ երգել է 30—40 տարի առաջ:

Ուխտագնացութիւնը նոր բան չէ Հայաստանում և հայոց մէջ, իւր պատմական ծագման սկիզբն կորցնում է դարերի խորքերում: Այժմեան քրիստոնէական ուխտագնացութիւնն անմիջական ժառանգութիւն է կաթողիկոսական ուխտագնացութեան: Ո՞վ չէ յիշում Աշտիշատի հանդէսները Անահիտի և Աստղիկի արձանների առաջ՝ ինչպէս պատմում է Ագաթանգեղոս. կամ տօնախմբութիւնը Մաթան քրմապետի գերեզմանի

վերայ Բագրեանդ գաւառում, որ Վազարշը յետոյ Նաւասար-  
դի առաջին օրը հաստատեց, տօն, որ Խորենացու պատմու-  
թեան մէջ կոչվում է աշխարհախո՛մբ: Որպէս Մաթանի գերեզ-  
մանի վերայ եղած զօհերից անցաւորները վայելում էին, նոյնը  
լինում է և այսօր, որ մատաղատէրը կտոր կտոր բաժանում է  
իւր մատաղի միտը կամ կերակուրը սորան և նորան, կամ նըս-  
տեցնում կերակրում է ամեն ոքի:

Նարեշար դարերի ընթացքում սրբագործուած և արմատա-  
ցած հայ ուխտագնացութիւնը այսօր ևս նոյնութեամբ կատար-  
վում է՝ ինչպէս երկու հազար տարի առաջ, բայց և այնպէս  
այդ ուխտագնացութիւնը որ մեր աչքի առաջ իւրաքանչիւր  
տարի կատարվում է վանքերի շուրջը, չունի այսօր իւր ընդ-  
հանուր, մանրամասն և ճիշդ նկարագրութիւնը: Մեզ յայտնի  
չէ սրտեղ, որ վանքում, երբ, սրտեղից և սրբան ուխտագնա-  
ցիներ են լինում, ի՞նչպիսի հանդէսներ են կատարվում, ի՞նչ-  
պիսի զուարճութիւններ են լինում, որ ձեռով են կատարվում  
ուխտագնացների զահարերութիւնը, տղօթքը, նուիրատու-  
թիւնը: Ո՞րպիսի ճանապարհներով, ճանապարհորդական միջոց-  
ներով, հեշտութիւններով կամ դժուարութիւններով է կա-  
տարվում ուխտագնացութիւնը այս և այն տեղ: Ի՞նչ փոխա-  
դարձ յարաբերութեանց մէջ են լինում ուխտաւորները և  
վանքերի վարչութիւնը կամ ի՞նչ ընդունելութիւն են անում  
նորանց վանահայրերը: Ի՞նչ միջոցներ են գործադրվում վան-  
քերի կողմից ուխտաւորների հոսանքը շատացնելու, նորանց  
գրութիւնը բարւոքելու, ջերմեւանդութեանը նպաստելու,  
կրօնական զգացմունքները շարժելու, լքեալ սրտերը հոգեպէս  
մխիթարելու և այլն:

Սոյնպիսի անթիւ և անհամար հարցերից ծագում է մի ուխ-  
տագնացական մութ աշխարհ, որի վերայ դեռ ևս ընդհանուր  
և մանրազննիչ լոյս չէ սփռած, որ բանասիրի հետաքրքրու-  
թիւնը գոհացած լինի ուխտագնացութեան կատարեալ պատ-  
կերով: Ներկայ գրութեամբս ես միայն և կարողութիւն չունիմ  
յիշածս լուսանցքը լրացնելու, ես յիշում եմ այն բանը, որի  
պակասութիւնը զգու՛մ եմ:

Արգեազի Սուրբ խաչ վանքը, ինչպէս վերը յիշեցի, նշանա-  
ւոր ուխտագնացական վանքերից մինն է: Նորա տօնն է Սուրբ  
խաչի տօնին: Իւրաքանչիւր տարի հոկտեմբերի 8ին կամ 11ին:  
Ուխտաւորներն ըստ մեծի մասին գալիս են Դարալագեազից,  
Շուլաւէրից, Երևանի, Էջմիածնի, Սուրմալուի, գաւառներից,  
Նոր Բայազէտից և նորա գաւառից, Նախիջևանից և նորա  
գաւառից, Զանգեզորից և այլ տեղերից:

Դարալագեազում և նորա շրջակայքում յարմարին ճանապարհ  
չլինելու պատճառով ուխտաւորները գալիս են ձիերով, բայց  
մեծ մասամբ հեռուով, կանայք և աղջկունք ենթարկւում են  
նոյն վիճակին: Այս տեղի ուխտագնացութիւնը մի տեսակ մար-  
տիրոսութիւն է եթէ աչքի առաջ ունենանք բոլոր գոռարու-  
թիւնները թէ ճանապարհում և թէ վանքի տակ: Երևակայե-  
ցէք ամբողջ շաբաթներով կամ օրերով հետիոտս ճանապար-  
հորդութիւն քարոտ և խճոտ ճանապարհներով, սարերի, ձորե-  
րի, ժայռերի, անտառների, դաշտերի միջով, ենթարկուելով  
երբեմն ցրտերի, շոգերի, քաղցի, ծարաւի և մանաւանդ մեր-  
ձակայ գիւղերի թուրք գողերի յարձակման: Շատերը մեծ  
գոռարութեամբ բերում են իւրեանց անդամալոյծ կամ այլ  
երկարատեւ և անբուժելի ցաւով հիւանդներին:

Ուխտաւորների մի մասը բերում է իւր հետ ոչխար, գառ,  
հաւ արագաղ, կով, արջառ մատաղ անելու: Բայց հեռաւոր  
տեղերից եկողների մեծ մասն իւրեանց մատաղացուն գնում են  
նոյն իսկ Սուրբ խաչում, ուր ծախում են բազմութեամբ Դա-  
րալագեազի հայ, թուրք և քիւրդ բնակիչներն և կամ վերջա-  
պէս վանահայրը:

Սուրբ խաչ վանքը, ինչպէս վերը յիշած է, չունի բաւակա-  
նաչափ սենեակներ այդ ահագին բազմութեան համար, ուստի  
ուխտաւորներն իջնում են խումբ խումբ վանքի պարսպից  
դուրս, բացօթեայ տեղ, դաշտի վերայ, ահռելի քարակոյտնե-  
րի մէջ: Որովհետև Սուրբ խաչի տեղը բարձրագիւր է և լեռնոտ,  
իսկ ամիսը հոկտեմբեր, հետեւաբար և ցուրտ եղանակ: Մանա-  
ւանդ գիշերներն, ուստի ուխտաւորներից ոմանք Արգեազ գիւ-  
ղի կամ այլ գիւղերի թուրքերից վարձում են թաղիքէ վրան,

մի կամ երկու գիշերի համար 3—5 ռուբլի վարձով: Բայց մեծամասնութիւնն այնուամենայնիւ մնում է բացօթեայ: Ուխտաւորների խումբը կազմվում է կամ բարեկամներից կամ համաբնակիչներից:

(Շարո-հակէլի)

ԳՈՋԲԵՐՈՒՆԻ.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ.

ԳՈՂՈՒԱԾՔ ԵՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԳԻ.

Ի 21 սեպտ. 1888, Սինօզն Ս. Էջմիածնի հիմնեալ ի վերայ աղերսախառն խնդրոյ Յովհ. սարկաւազի Մանուկեան, որով զղջացեալ ընդ սխալանս իւր՝ հայցէ ներումն. ըստ բարեհաճ կամաց Վեհ. Հայրապետի Ազգիս, վերադարձոյց նմին զկոչումն սարկաւազութեան, և հրամանագրեաց Կոնսիստ. Հայոց Երևանայ կարգել զնա միաբան ի միում ի վանօրէից եղելոց ընդ տեսչութեամբ իւրով:

Ի 10 փետր. Սինօզն Ս. Էջմիածնի հիմնեալ ի վերայ յայտարարութեան Վ. Ի. Կոնս. Հայոց Երևանայ՝ վասն յանդուգն և կամակոր ընթացից և անհնազանդութեանց Յակոբ քահանայի նաւօյեան ընդդէմ կարգադրութեան հոգեւոր իշխանութեան իւրոյ՝ որ վասն վերադառնալոյ ի գիւղն Աղազօր՝ յորոյ վերայ ձեռնադրեալն է, հրամանագրեաց նմին հրաժարեցուցանել զնա ի քահանայագործութենէն և առաքել ի վանս Գեղարդայ յապաշխարութիւն միամեայ ժամանակաւ, մինչև զղջացեալ զգատասցի ի հակառակասէր գնացիցն՝ ընդդէմ կարգադրութեան վիճակային և ծայրագոյն իշխանութեանց՝ և զլրումն ապաշխարանաց քահանային, զմի մասն արդեանց ծխոցն աւլ ընտանեաց նորա:

Ի 27. փետր. Սինօզն Ս. Էջմիածնի հիմնեալ ի վերայ յայտարարութեան վիճակային Կոնսիստ. Հայոց Երևանայ՝ վասն անվայել արարմանց՝ հակառակ քահանայական աստիճանի և կոչման Միքայէլ քահանայի Տէր Պօղոսեան Գեարմիլի գեղջ Կարսայ նահանգի, հրամանագրեաց նմին ենթարկել զնա միամեայ ապաշ-